ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Հոկտեմբերի 15—16-ը Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում կայացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Երևանի պետական համալսարանի և Մոսկվայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի կազմակերպած գիտական նստաշրջանը՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին պատումի հրատարակության 100-ամյակին։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Մ. Մկրյանը։

— Հարյուր տարի է անցել այն օրից,— ասաց նա,— երբ հայ բանահավաքության մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանցը իր «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքում հրատարակեց «Սասունցի Դավիթ» դյուցազներգության առաջին պատումը։ Հիանալի իմանալով մեր ժողովրդական բանահյուսության առանձնահատկությունները, Գարեգին Սրվանձտյանցը նկատեց, որ այդ ստեղծագործությունը իր ժանրային առանձնահատկություններով բացառիկ գեղարվեստական արժեք ներկայացնող ժողովրդական վեպ է։ Գարեգին Սրվանձտյանցի սկսած գործը շարունակեց Մանուկ Աբեղյանը, որը առաջին պատումի հրատարակությունից 15 տարի անց գրի առավ ու հրատարակեց «Սասունցի Դավիթ» շատ արժեքավոր մի այլ պատում։ Այնուհետև հանդես եկան ուրիշները՝ ժողովրդական ասացողներից գրի առնելով այլ պատումներ ու տարբերակներ։ «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրման ու պատումների հավարման գործը իր պատշաճ բարձրությանը հասավ սովետական կարգերի օրոք, երբ 1939 թ. միութենական մասշտաբով նշվեց նրա 1000-ամյակը։

«Սասունցի Դավիթ» էպոսի դաղափարական բովանդակության լավագույն կողմերից մեկը բարձր հայրենասիրությունն է ու հումանիզմը։ Էպոսում սքանչելի մարմնավորում են ստացել հայ ժողովրդի բնավորության լավագույն գծերը՝ ողու ազնվությունն ու հարստությունը, արիությունն ու խիզախությունը, առողջ կենսահայեցողությունն ու բարոյական վեհ ըմբռնումները, հարգանքը դեպի հարևան ժողովուրդները։

«Սասունցի Դավիթը» համաշխարհային ժողովրդական արվեստի այն նմուշներից է, որ պահպանվել ու մեզ է հասել առանց որևէ գրական միջամտության, իսկ դա նշանակում է, որ նրա ուսումնասիրությունը հսկայական նշանակություն ունի նաև ընդհանուր էպոսագիտության համար։

Զեկուցումներով հանդես եկան բանասիր. դիտ. դոկտոր Գ. Գրիգորյանը («Հայ էպոսագիտության զարգացման փուլերը»), պրոֆ. Ա. Պետրոսյանը («Սասունցի Դավիթը» և ՍՍՀՄ ժողովուրդների էպոսները», Մոսկվա), ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Զալոյանը («Սասունցի Դավիթ» էպոսի սոցիալական բովանդակությունը»), դոցենտ Ա. Բուդաղյանը («Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանությունները և հետազոտությունները արտասահմանում»), ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը («Բարբառագրության հարցերը էպոսի պատումների գրառումներում»), արվեստաբանության դոկտոր Մ. Մուրադյանը («Սասունցի Դավիթ» էպոսի երգվող հատվածների ձայնագրությունները Կոմիտասի և այլոց կողմից»), պատմ. գիտ. դոկտոր Վ. Բդոյանը («Ամուսնության ձևերը «Սասունցի Դավիթ» էպոսում»)։

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

* * *

Այս տարի լրացավ ֆաշիստական լծից Լեհաստանի ազատագրման և երկրում ժողովրդական կարգերի հաստատման 30-ամյակը։ Ժողովրդական Լեհաստանի այդ հոբելյանին էր նվիրված Երևանի պետական և Լյուբլինի (Լեհաստան) Մարիա Կյուրի-Սկլադովսկայայի անվան համալսարանների համատեղ գիտական նստաշրջանը, որը կայացավ նոյեմբերի 1—2-ը, Երևանում։ Բացելով նստաշրջանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը խոսեց հիտլերյան օկուպացիայի պայմաններում լեհ ժողովրդի կրած տառապանքների մասին, նշեց Լեհաստանի ազատագրման գործում սովետական բանակի կատարած վճռական դերը, ինչպես նաև լեհ ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումները սոցիալիստական շինարարության ասպարեզում։ Պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանը Լյուբլինի համալսարանի ռեկտոր, պրոֆ. Վ. Սկշիդլոյին և նրա գլխավորած պատվիրակությանը ջերմորեն շնորհավորեց Լեհաստանի վերածնության տոնի, ինչպես նաև Լյուբլինի համալսարանի հիմնադրման 30-ամյակի առթիվ։

«Լեհաստանում ժողովրդական կարգերի հաս-

տատումը և զարգացումը» թեմայով զեկուցեց պրոֆ. Վ. Սկշիդլոն։ Նա ցույց տվեց, որ ժողովրդական իշխանությունը Լեհաստանում հաստատվեց ոչ միայն ֆաշիստական օկուպանտներին երկրից վոնդելու, այլև լեհ բուրժուազիայի և կալվածատիրության հակահեղափոխական ուժերի դեմ համառ պայքար մղելու հետևանքով։ Անցած 30 տարում, ասաց զեկուցողը, լեհ ժողովուրդը Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների օգնությամբ կյանքի բոլոր ասպարեզներում մեծ է բերել մեծ նվաճումներ։ Ժողովրդական Լեհաստանը դարձել է սոցիալիստական համագործակցության կարևոր օղակը, Սովետական Միության հավատարիմ դաշնակիցը։

Լյուբլինի համալսարանի պրոֆ. Ս. Կշիկալայի և Երևանի պետական համալսարանի դոցենտ Հ. Պետրոսյանի զեկուցումները նվիրված էին պատերազմի ժամանակ լեհ ժողովրդին Սովետական Միության ցույց տված եղբայրական օգնությանը, ինչպես նաև ֆաշիստական օկուպանտների դեմ լեհ և սովետական ռազմիկների ու պարտիզանների մղած համատեղ պայքարին։

Լյուբլինի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Օրլովսկին իր զեկուցման մեջ խոսեց 1944—1974 թթ. Լեհաստանի ժողովրդական տնտեսության մեծ բերած նվաճումների, իսկ դոկտոր Յան Ստեմպերսկին՝ ժողովրդական կարգերի օրոք Լեհաստանի միջնակարգ և բարձրագույն կրթության զարգացման ասպարեզում տեղի ունեցած քանակական և որակական գգալի փոփոխությունների մասին։ Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր, պրոֆ. Մ. Մելիքյանը իր զեկուցումը նվիրեց սոցիալիստական հասարակության պայմաններում ազգերի համակողմանի և ներդաշնակ զարգացման հարցերին։

Նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան նաև դոցենտ Մ. Հովհաննիսյանը («Հայ-լեհական պատմական կապերի մասին»), պրոֆ. Ա. Աբրահամյանը («Լեհաստանի անկախության համար մղված պատերազմներին տեղի հայ բնակչության մասնակցության մասին»), Լյուբլինի համալսարանի դասախոս Ա. Կորորովիչը («Զամոստիե քաղաքի հայկական դատարանը»)։

Վերջում Լյուբլինի համալսարանի ռեկտոր, պրոֆ. Վ. Սկշիդլոն լեհական պատվիրակության անունից երախտագիտության խոսք ասաց լեհ ժողովրդի ազգային տոնը Երևանի համալսարանում ջերմորեն նշելու համար և հույս հայտնեց, որ երկու համալսարանների համագործակցությունը հետագայում ավելի կընդլայնվի ու կամրապնդվի։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

* * *

Հոկտեմբերի 22-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան և Պետական մրցանակների դափնեկիր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պրոֆ. Արամ Խաչատրյանի ստեղծագործությանն ու գործունեությանը։

Առավոտյան և երեկոյան նիստերում կարդացվեցին հետևյալ զեկուցումները. Ա. Խաչատրյանը սովետահայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր (արվեստագիտ. թեկնածու Գ. Գյոդակյան, Ա. Խաչատրյանի ստեղծագործության որոշ սկզբունքները և նրա մարմնավորումը Սովետական Ուզբեկստանի կոմպոզիտորների պրակտիկայում (արվեստագիտ. դոկտոր, պրոֆ. Տ. Վիզգո, Տաշքենդ), Ա. Խաչատրյանի բալետների գեղագիտական սկզբունքները (արվեստագիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Տիգրանով), Ա. Խաչատրյանը և ազրբեջանական երաժշտությունը (արվեստագիտ. թեկնածու Ն. Ալիևա, Բաքու), Ա. Խաչատրյանը երաժշտության մասին (արվեստագիտ. թեկնածու Մ. Տեր-Սիմոնյան), Ա. Խաչատրյանի երաժշտական ոճի մի քանի հարցերի մասին (արվեստագիտ. թեկնածու Գ. Օրջոնիկիձե, Թբիլիսի), Ա. Խաչատրյանը և համաշխարհային երաժշտությունը (երաժշտագետ Ի. Մարտինով, Մոսկվա), Ազգայինի և միջազգայինի փոխհարաբերությունը Ա. Խաչատրյանի ստեղծագործության մեջ (արվեստագիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Սոխոր, Լենինգրադ), Ա. Խաչատրյանը և նրա երաժշտությունը Սովետական Լատվիայում (արվեստագիտ. թեկնածու Տ. Կուրիշևա, Ռիգա), Ա. Խաչատրյան-մանկավարժի մասին (Վրաց. ՍՍՀ արվեստի վաստ. գործիչ, կոմպոզիտոր Ն. Գաբունիա, Թբիլիսի), Ա. Խաչատրյանի կինոերաժշտությունը (երաժշտագետ Ն. Միկոյան, Մոսկվա), Հայաստանը Ա. Խաչատրյանի ստեղծագործություններում (փիլիսոփ. գիտ. թեկնածու Ն. Շախնազարովա, Մոսկվա), «Սպարտա-

կր» որպես բալետ-ոդրերգության ժանր (երաժշտագետ Ն. Կուրիլենկո, Մոսկվա)։

Նստաշրջանը, որին մասնակցում էին համամիութենական երաժշտագիտական մտքի առաջատար ուժերը, անցավ գիտական բարձր մակարդակով։ Զեկուցողները Ա. Խաչատրյանի ստեղծագործություններն ու գործունեությունը լուսաբանեցին ու արժևորեցին պատմական, գեղագիտական, սոցիոլոգիայի և տեսական երաժշտագիտության տեսանկյուններից, ինչպես նաև տարբեր առումներով՝ թե՛ որպես ազգային երաժշտության ու մշակույթի Էրեույթ և թե՛ որպես Անդրկովկասի, Արևելքի, սովետական և համամարդկային երաժշտական մշակույթի երևույթ։

Թեմայի բազմազանությունը և խորությունը զեկուցողներին առիթ ընձեռեց առաջադրել նոր մտքեր ու մոտեցման սկզբունքներ՝ ձևի ու բովանդակության, ազգայինի ու միջազգայինի, ավանդականի ու արդիականի, ոճի առանձնահատկությունների ու վարպետության մակարդակի հարցերի վերաբերյալ։

Նստաշրջանի վերջում ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Խաչատրյանը։

Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ